

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**1 հոկտեմբերի 2020թ.  
ք. Երևան**

**N 29-Ա**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ «ԻՄ ՔԱՅԼԸ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ  
ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ, ԻՆՔՆԱԲԱՑԱՐԿ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ  
ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ Գ. ԵՐԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՄԱՍԻՆ**

Ուսումնասիրելով «Իմ քայլը» կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորի թեկնածու Գոռ Հովհաննեսի Երանյանի կողմից Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացված ինքնաբացարկի մասին նոտարական վավերացմամբ դիմումը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

**Պ Ա Ր Զ Ե Ց.**

«Իմ քայլը» կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորի թեկնածու Գոռ Հովհաննեսի Երանյանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 23-ին Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվել է ինքնաբացարկի մասին նոտարական վավերացմամբ դիմում՝ վերնագրված որպես «հայտարարություն», որի համաձայն դիմումատուն հայտնում է ինքնաբացարկ և հանում է իր թեկնածությունը «Իմ քայլը» կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակից:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 100-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված անձանց կողմից ներկայացված ինքնաբացարկի կամ մանդատից հրաժարվելու դիմումները վավերացվում են նոտարական կարգով, կամ համապատասխան դիմումը անձը հաստատում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստում:»:

Սակայն մինչև սույն դիմումով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից նիստ հրավիրելը՝ 2020 թվականի սեպտեմբերի 24-ին դիմումատու Գ. Երանյանը 2020 թվականի սեպտեմբերի 24-ին Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացրել մեկ այլ դիմում, որում նշված է. «Ես, Իմ քայլը կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորի թեկնածու Գոռ Երանյանս, սույն թվականի սեպտեմբերի 23-ին ԿԸՀ եմ ներկայացրել

նոտարական վավերացմամբ դիմում այն մասին, որ ՀՀ ընտրական օրենսգիրք ՀՀ սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն հայտնել եմ ինքնաբացարկ և հանել իմ թեկնածությունը իմ քայլը կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակից:

Սույն դիմումով խնդրում եմ հետ վերադարձնել իմ դիմումը, այն չքննարկել, քանի որ հրաժարվում եմ դրանով ներկայացրած պահանջից: (. . . )»:

Դիմումին կից ներկայացվել է դիմումատուի անձնագրի պատճենը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն՝ «1. Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե՝ բ) դիմողը գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից.»:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

#### **Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. «Իմ քայլը» կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորի թեկնածու Գոռ Հովհաննեսի Երանյանի 23.09.2020թ. դիմումով հարուցված վարչական վարույթը կարճել:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ օրացուցային երեք օրվա ընթացքում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Տ. Մուկուչյան**